

Հ. ԱՃԱՌՅԱՆ, Լիակատաւ Բերականոնքուն հայոց լեզվի համեմատու-
րյամբ 562 լեզուների, հատ. 6, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, 845 էջ:

Հայ լեզվաբանության մեծ երախտավորի ընդարձակածավալ և խիստ արժեքավոր աշխատության ներկա հատորն ընդգրկում է հնչյունաբանությունը՝ հանրագումարի բերելով այս բնագավառում նրա կատարած բազմամյա բեղմնավոր աշխատանքի արդյունքները: Ըստ աշխատության ընդհանուր պլանի՝ այստեղ ևս հեղինակը միահյուսել ու շատ պարզ լեզվով ընթերցողին է ներկայացրել գիտության՝ իր ժամանակի տվյալները և այն ամենը, ինչ ըստացել է սեփական հետազոտություններով ու գիտարկումներով: Նա ջանացել է ի մի բերել, գիտականորեն համադրել մի կողմից աշխարհի զանազան լեզուների, մյուս կողմից՝ հայերենի հնչյուններին և հնչյունական բազմազան իրողություններին վերաբերող փաստերն ու եզրակացությունները: Այսպիսով հետապնդել է երկու հիմնական նպատակ՝ այ վեր հանել և բունութագրել մարդկային լեզվի հնչյունային կողմը՝ համապատասխան իրողություններով՝ ըստ այլևայլ կոնկրետ լեզուների, բ) այդ խորքի վրա քննել և ցույց տալ հայոց լեզվի հնչյունային կազմը՝ անցյալ ու ներկա վիճակներով, նրանում տեղ գտած հարուստ երևույթներով:

Այսպիսի նպատակների իրագործումով ըստացվել է մի յուրատեսակ ուսումնասիրություն, որտեղ կարելի է գտնել և՛ զուգադրական, և՛ պատմական, և՛ պատմա-համեմատական, և՛ նկարագրական հնչյունաբանություն: Բնական է, այս դեպքում ևս հեղինակը պիտի գործադրեր ուսումնասիրության տարբեր մեթոդներ (ինչպես այդ բազմահատոր աշխատության մյուս հատորներում): Ըստ երկի բնույթի և շարադրվող նյութի թվադրանքի՝ ցուցաբերվել են ընդհանուր-զուգադրական, պատմա-համեմատական, նկարագրական մեթոդներ՝ որքան թույլ են տրվել ժամանակի գիտության վիճակը և ուսումնասիրողի հնարավորությունները:

Հ. Աճառյանն այստեղ էլ զարմանք է պատճառում իր լայն ու խոր պատրաստությունը, ծայրահեղ աշխատասիրությամբ և գիտության հանդեպ ցուցաբերած անհուն նվիրվածությամբ: Գիտնականի այդ բարձր հատկությունների շնորհիվ է ստեղծվել այս փաստառատ ու բովանդակալից հատորը, որը ամբողջ երկի հատորային շղթայի մի օղակը կազմելով հանդերձ՝ հատուկ մենագրության նշանակություն ունի:

Գիրքը կրում է առանձին խորագիր՝ «Ձայնագիտություն», որով (երբեմն էլ ձայնաբանություն անվանումով) հեղինակը նկատի ունի 17 Հանգես, № 4

հնչյունաբանությունը, այսինքն լեզվաբանության այն ճյուղը կամ բաժինը, որը «զբաղվում է ձայնի, բայց հատկապես մարդկային ձայնի ուսումնասիրությամբ» (էջ 5): Գիտական հիմնական անվանումներից ձայն-ն էլ գործածվում է ճնշում-ի, բայց զուգահեռաբար նաև՝ արտասանվածի-ի իմաստով: Այլև նրան այստեղ հանդիպում ենք ընդհանրապես առարկաների տատանումներից առաջացող ձայնի իմաստով, ինչպես ընդունված է ֆիզիկայի մեջ: «Այս գրքում մենք ձայն բառին տվեցինք ընդհանուր գործածություն...»,— գրում է հեղինակը (էջ 10):

Հեղինակի պատկերացմամբ՝ հնչյունաբանությամբ կարելի է ուսումնասիրել՝ ա) հնչյունը որպես ֆիզիկական-բնախոսական երևույթ, այսինքն՝ ինչից է կազմվում, ինչպե՞ս է ձևավորվում, ի՞նչ մասնավոր ու ընդհանուր հատկանիշներ է ունենում, բ) մարդկային լեզվի հնչյունների արտաբերմանը ի՞նչ գործարաններ են մասնակցում, ինչպե՞ս է տեղի ունենում արտաբերումը, և կազմավորված հնչյուններն ինչպե՞ս են փոխանցվում մեր լսողական գործարաններին ու հասնում լսողական կենտրոնին, գ) մարդկային լեզվում ինչ հնչյուններ կան, յուրաքանչյուր լեզու մասնավորապես ինչպիսի՞ հնչյուններ ունի, և գիտականորեն ի՞նչ հիմունքներով կարող են դասակարգվել այդ հնչյունները, զ) զանազան խմբակցությունների մեջ հնչյունները միմյանց վրա ի՞նչ ազդեցություն են գործում և հետագայում էլ ինչպիսի՞ զարգացում ու փոփոխություններ են ունենում: Այս չորս խնդիրների մեջ զուտ լեզվաբանական են համարված վերջին երկուսը, իսկ մյուսները դիտված են որպես օժանդակ հարցեր, որոնց ուսումնասիրությունը, սակայն, կարևոր է հիմնական նպատակի սկզբունքները ըմբռնելու և ճիշտ կիրառելու գործում: Հեղինակը սրանցով էլ նախապես ծրագրում է իր անելիքը, պայմանավորում գրքի ողջ բովանդակությունը:

Ըստ վերոհիշյալ ծրագրի՝ գիրքը բաժանված է երկու հիմնական մասերի. հատուկ վերնագրերով՝ ա) «Ձայնախոսություն», բ) «Ձայնափոխություն»: Այսպիսի բաժանումը բխում է գրքի բուն լուծյունից և ուղղված է հեղինակի հետապնդած հիմնական նպատակների իրագործմանը:

Հնչյունների բնույթի, տեսակների, կրած փոփոխությունների վերհանմանը վերաբերող հարցերի գիտական քննությունը այդ երկու մաս-

սերի ուղն ու ծուծն է կաղժում: Այդ հարցերի հետ, ինչպես կտեսնենք, ներառված են նաև այնպիսիները, որոնք բուն նյութին առնչվում են զգալի հեռավորությամբ:

Առաջին մասի համար իբրև նախագիտելիք բնութագրվում է ձայնն ընդհանրապես՝ որպես առհասարակ առարկայի տատանումների հետեւվանքով առաջացող օդի ալիքավորման արդյունք: Խոսվում է նրա արագության, մարդու ականջին հասնելու հնարավորության, ինչպես նաև հատկանիշների՝ ուժգնության, բարձրության, երանգի ու տևողության, դրանք առաջ բերող պայմանների մասին: Դրանց առնչությամբ տեղեկություններ են տրվում նաև երաժշտական հնչյունների ու ձայնատեսակների, արձագանքման, ներդաշնակության և նման այլ երևույթների ու հասկացությունների վերաբերյալ:

Առանձին գլուխ է հատկացված արտասանական գործարանների ու նրանց գործունեության նկարագրմանը: «Մարդկային ձայնը, — նշվում է այնտեղ, — էրեք գործարանների միահաղույն գործունեության արդյունքն է. այն է՝ թոքերը, խոչակը և բերանը: Առաջինի դերն է շնչումը, երկրորդի՝ ձայնի արտադրությունը, երրորդի՝ ձայնի հոդավորումը» (էջ 39): Սրա հիման վրա էլ տրվում է այս ոլորտներում գտնվող այն բոլոր մասերի ու նրանց աշխատանքի հանգամանալից բնութագիրը, որոնք որևէ չափով մասնակցում են ձայնի առաջացմանը և տարբեր հնչյունների կազմավորմանն ու արտաբերմանը: Ծիշտ կերպով մատնանշվում է, որ տարբեր լեզուներում արտասանական գործարանների աշխատանքի մեջ լինում են առանձնահատկություններ, որոնցով պայմանավորվում են այդ լեզուների արտասանվածքի յուրահատկությունները: Ընդգծվում է հնչյունների հոդավորման հիմքի կարևորությունը: Յուրաքանչյուր լեզվի համար ամենակարևորն է նկատվում հենց այդ հոդավորման հիմքը: Մեծ է դրա գործնական նշանակությունը: «Ծիշտ սովորել մի օտար լեզու, նշանակում է յուրացնել նրա հոդավորման հիմքը, որ շատ ավելի դժվար է, քան բուն իսկ լեզուն սովորելը» (էջ 51): Հեղինակն այն կարծիքին է, թե հնչյունների արտասանությունը համապատասխան գործարանների հիմնական դերը չէ: Դրան մարդիկ վարժվում են իրենց զարգացման ընթացքում՝ ըստ շրջապատի լեզվական դրության:

2. Աճառյանը հատուկ ուշադրության է արժանացնում լսողական գործարանների նշանակությունը (ինչպես վարվում են և ուրիշ գիտնականներ): Զե՞ որ լսողությամբ ենք տարբերում զանազան հնչյունները և ըստ մեր ըն-

կալման էլ դրանք արտասանում ենք մեր խոսողության ընթացքում, ինչպես նաև պատշաճ արտասանությամբ հաղորդում սերունդներին:

Բայց որքան էլ զգայուն լինի մարդու ականջը, լիակատար կերպով չի կարող որսալ հնչյունային այն բոլոր նրբությունները, որոնք հանդես են գալիս տարբեր լեզուներում: Այս հանգամանքը դժվարություններ է առաջ բերում աշխարհի լեզուների բոլոր տեսակի հնչյունների ուսումնասիրման համար: Ահա այստեղից էլ ծագել է փորձարարական ուսումնասիրության խնդիրը: Մարդիկ մտածել են ստեղծել այնպիսի գործիքներ, որոնցով կարելի լինի հետազոտել ամեն մի հնչյուն իր բոլոր յուրահատկություններով: Եվ դեռ անցյալ դարի վերջերից այդպիսի զանազան գործիքների ստեղծման հետ սկզբնավորվել ու հետագայում ձևավորվել է փորձարարական հնչյունաբանությունը, որը չի անտեսված ներկա գրքում: 2. Աճառյանը տալիս է իրեն հայտնի գործիքների նկարագիրը և խոսում դրանցով տարբեր երկրներում կատարված մի շարք ուսումնասիրությունների մասին. նա մասնավորապես կանգ է առնում Խուսլոյի աշխատանքների վրա և հիշեցնում է, որ իր իսկ մասնակցությամբ այդ գիտնականի աշխատանոցում կատարվել է հայոց լեզվի հնչյունների փորձարարական հետազոտությունը, որի արդյունքների ամփոփմանը նվիրված աշխատության միայն մի մասն է հրատարակված (էջ 93): Փորձարարական հնչյունաբանությունը այժմ, իհարկե, շատ առաջ է գնացել՝ ստեղծվել են ուրիշ նոր գործիքներ, կատարելագործվել են եղածները, առաջ են եկել նոր մեթոդներ և այլն, բայց չի կարելի ուրանալ, որ 2. Աճառյանն իրեն հատուկ բարեխղճությամբ ձգտել է ընթերցողին իրազեկ դարձնել իր ժամանակի փորձարարական նվաճումներին և, հասկանալի է, եթե մեծ գիտնականը կենդանի լիներ, գրքի այս գլուխը (և ոչ միայն այս) բոլորովին ուրիշ պատկեր կունենար:

Գրքի այս մասում քննարկվող կենտրոնական հարցերից է հնչյունների դասակարգումը: Հեղինակը նախ կտրականապես մերժում է ձայնավորների և բաղաձայնների խմբավորման հիմքում վանկարարության (և անվանկարարության) առանձնահատկությունը դնելը՝ բնորոշ օրինակներով ցույց տալով, որ մի շարք լեզուներում (սլավոնական, գերմանական, աֆրիկյան և այլն) վանկարար դեր ունեն նաև որոշ բաղաձայններ (ձայնորդներ): Այդ նկատառումով նա առաջարկում է հենվել հնչյունների ֆիզիկական ու բնախոսական հատկանիշներ վրա, քանի որ «ձայնավորներն ու բաղաձայնները տարբերվում են իրարից լսողական և բնախոսական տեսակետով», ձայնավորը «ի:

կական և ամբողջական ձայնն է», բաղաձայնների մի մասը լրիվ աղմուկ է, իսկ մի մասն էլ՝ աղմուկի ու ձայնի խառնուրդ (էջ 107)։ Այդուհանդերձ՝ ի վերջո ընդունում է հնչյունների երեք խմբեր՝ ձայնավորներ, կիսաձայններ և բաղաձայններ (էջ 109)։ Այս բաժանմամբ բոլոր ձայնորդները չեն հայտարարվում կիսաձայններ։ զրքի ամբողջ շարադրանքից երևում է, որ բաղմաթիվ տեղերում դրանք նախ որակվում են որպես բաղաձայններ, ուստի ըստ էության նրանք բաղաձայնների մի ենթատեսակն են կազմում, քանի որ ձայնավորների նման լիապես չեն հակադրվում բաղաձայններին և ֆիզիկական ու բնախոսական մի շարք բնորոշ հատկանիշներով մոտ են նրանց։ Սակայն դրանց հնչյունական որակը փոխվում է այն դեպքում, երբ ձայնավորների հետ երկբարբառներ են կազմում։ Ահա այդպիսի որակով նման հնչյունները կարող են ներառվել կիսաձայնների մեջ։

Այսպիսի բաժանմամբ առանձին գլուխներով հեղինակն այնուհետև կատարում է ձայնավորների, կիսաձայնների ու բաղաձայնների մանրամասն քննությունը։ Նա ձայնավորների բնութագրման մեջ շեշտը դնում է նրանց անհատականությունը՝ սլալմանավորող երանգի վրա։ Երանգի տարբերությունը, որ ձայնավորների բուն տարբերությունն է, առաջ է գալիս «հոդավորող գործարանների ընդունած դիրքից, ուրիշ խոսքով՝ հնչարանի ձևից ու մեծությունից» (էջ 110)։ Այստեղից ելնելով էլ հեղինակը ցույց է տալիս կատկի, ստորին ծնոտի, շրթունքների և լեզվի ընդունած դիրքի դերը ձայնավորների կազմավորման մեջ, որը և միաժամանակ էական է ձայնավորների դասակարգման համար։ Ամենահիմնականը համարելով լեզվի դերը և ընդունած դիրքերը՝ նա ցույց է տալիս ձայնավորների երեք գլխավոր շարքերը՝ առաջակողմյան (վրիպակով տպված է «աջակողմյան») կամ քմային, հետսակողմյան կամ կատկային և խառն (էջ 111), ասլա և ըստ ստորին ծնոտի շարժումով ստեղծվող անկյան բնույթի՝ բաց և փակ, ըստ շրթունքների դիրքի՝ կլոր կամ շրթնային և ոչ շրթնային տեսակները։ հետագա շարադրանքի մեջ խոսում է նաև ունգների դերի (ուստի և այլևայլ լեզուների ունգային ձայնավորների) մասին, չեն անտեսվում և ձայնավորների աստիճանները՝ ըստ լեզվի բարձրացումների։ Ընդհանուր դասակարգումից հետո տրվում է յուրաքանչյուր ձայնավորի բնութագիրն առանձին՝ բաղմաթիվ լեզուներից բերվող ճոխ փաստերով, ընդհանրականության ու յուրահատկությունների ցուցադրումով։

Կիսաձայն են համարվում իրենց արտա-

հայտության բնույթով ու հնչական արժեքով ձայնավորների և բաղաձայնների միջին տեղը զրավող յուրահատուկ հնչյունները։ «...Կիսաձայն է կոչվում այն ձայնը, որի արտասանության ժամանակ գործարանների փակումով ձևացած անցքը ավելի նեղ է, քան պետք է ամենափակ ձայնավորների համար և ավելի լայն, քան պետք է բաղաձայնների համար, այնպես որ արտաբերության միջոցին ականջը լսում է ձայնավորի երանգը և միևնույն ժամանակ անցքի պատերին շփվող օդի աղմուկը, որ հատուկ է բաղաձայններին. կիսաձայնը ձայնավորի և բաղաձայնի միջին աստիճանն է» (էջ 140)։ Դա, ըստ հեղինակի բնութագրման՝ ամենափակ ձայնավորի շարունակությունն է։ Ուստի մատնացույց անելով ամենափակ ձայնավորները՝ կանգ է առնում նրանց հնչական շարունակությունը կազմող այդ կիսաձայնների վրա՝ շոռանալով ձայնորդների դիրքային այդպիսի որակները։ Անցնելով առանձին կիսաձայն հնչյունների բնութագրմանը՝ հեղինակը միաժամանակ նշում է, որ ժամանակակից հայ գրական լեզուն այդպիսի հնչյուններ չունի, այստեղ նրանց դիմաց կան լրիվ բաղաձայններ. նման հնչյուններ եղել են հին հայերենում և կան մեր որոշ բարբառներում։

Կիսաձայնները սերտորեն կապված են երկբարբառների ու եռաբարբառների կազմավորումների հետ։ Կիսաձայնների առիթով նկարագրվում են նաև երկբարբառներն ու եռաբարբառները։ Հենվելով իր ձեռքի տակ եղած տրվյալների վրա՝ Հ. Աճառյանը տեսականորեն հնարավոր է համարում մարդկային լեզվում 414 երկբարբառների կազմումը, որը և ոչ մի դեպքում հնարավոր չէ առանձին լեզուների համար։ Բայց կան լեզուներ, ինչպես ցույց է տրվում գրքում, որոնք աչքի են ընկնում երկբարբառների առատությամբ, ինչպես՝ լաոսերենը (37), աննամերենը (22), ֆրանսերենը (15), դանիերենը (15) և այլն։

Հարցին մոտենալով պատմական հայացքով՝ նա ցույց է տալիս, թե ինչպես շատ լեզուների պատմական զարգացման ընթացքում վերացել են երկբարբառներն ու եռաբարբառները։

Բաղաձայնները ամենից առաջ դասակարգվում են ըստ արտասանական գործարաններում ստեղծվող արգելքների բնույթի (ըստ արտաբերման եղանակի)։ Այդպիսով ընդունվում են երեք խմբեր՝ սեղմ կամ տևական, պայթական կամ վայրկենական և կիսապայթական։ Նաև հետաքրքրական է այն դիտողությունը, ըստ որի բաղաձայնները տարբեր դիրքերում արտասանական տարբեր յուրահատկություններ են ունենում, և այդ է պատճառը, որ պատմական զարգացման ընթացքում այդ դիրքերում տալ-

բեր փոփոխությունների են ենթարկվում (էջ 155)։ Այնուհետև բաղաձայնների խմբավորումները ներկայացվում են ըստ խլության ու թրթռունության (ըստ աղմուկի ու ձայնի հարաբերության) և ըստ կազմավորման տեղի։ Հետաքրքրական են խլության և թրթռունության տարբեր աստիճանները բնութագրող դիտողությունները, ինչպես նաև այն մանրամասնությունների ցուցադրումները, որոնք վերաբերում են բաղաձայնների տեսակավորմանն արտասանության մեջ ըստ ակտիվ և պասսիվ գործարանների դերի։ Այս ընդհանուր դասակարգումներից հետո առանձին հատվածներով, բազմաթիվ լեզուների հարուստ օրինակների հիման վրա ներկայացվում է սեղմ կամ տեական, պայթական կամ վայրկենական և կիսապայթական բաղաձայնների բազմակողմանի քննությունը։ Այստեղ աշխարհի լեզուների բաղաձայնները բնութագրվում են իրենց բոլոր հատկանիշներով։ Սեղմերը (շփականները) ներկայացվում են կիսաձայն, շփական, ցնցուն և կողմնական ենթատեսակներով (էջ 164), սրանք էլ իրենց հերթին ստորաբաժանվում են ըստ արտաբերման տեղի և բնութագրվում այս ու այլ հատկանիշներով։ Պայթականները ներկայացվում են շրթնային, ծայրալեզվային, միջալեզվային, հետնալեզվային և հետքերանային կամ կոկորդային տեսակներով (էջ 183), սրանք էլ իրենց ենթատեսակներով։ Այսպես, միայն շրթնայինների համար նշվում են կրկնաշրթնային, շրթնատամնային, շրթնալեզվային, շրթնալեզվակային ենթատեսակներ և այլն։ Կիսապայթականները (աֆրիկատները) բնորոշ են համարվում նրանով, որ նրանց արտասանության ժամանակ «լարումը պայթական է, իսկ էջքը՝ շփական» (էջ 197)։ Հեղինակը որոշակիորեն մերժում է դրանք կրկնակ (բարդ) բաղաձայններ համարելու տեսակետը (և նա առհասարակ բաղաձայնները ըստ կազմության չի դասակարգում, որովհետև չի ընդունում պարզ և բարդ հակադրություններ)։ Կիսապայթականները ներկայացված են շրթնային, ծայրալեզվային (միջնատամնային, հետնատամնային, նախաքմային), միջնալեզվային, հետնալեզվային, կոկորդային տեսակներով (էջ 197—200)։

Գլխի վերջում կատարված է հետաքրքրական ամփոփում, որից տեղեկանում ենք, որ ըստ եղած տվյալների՝ աշխարհի լեզուներում կա 128 բաղաձայն, որոնցից 60-ը թրթռուն են, 55-ը՝ խուլ, 13-ը՝ ղնդային (իհարկե, վերջիններս էլ թրթռուն և խուլ տեսակներ ունեն)։ Ահառյանն, իհարկե, սրանք չի բնութագրում հնչյութաբանորեն, սակայն ճիշտ կերպով նրկատում է, որ այս բոլոր տեսակի հնչյունները

միաժամանակ ամեն մի լեզվի մեջ գոյություն չունեն։ Ամեն մի լեզու ունենում է հնչյունների (արդի հասկացողությամբ՝ հնչյւթների) որոշ սահմանափակ քանակ։ Այդ ցույց տալու համար գրքում բերվում են հետաքրքրական տրվյալներ՝ ըստ առանձին լեզուների։

Աշխարհի լեզուների հնչյունների այս ընդհանուր բնութագրումներից հետո Հ. Ահառյանն անցնում է հնդեվրոպական նախալեզվի և ապա հայերենի հնչյունական համակարգերի նկարագրմանը։ Նա նշում է, որ հնդեվրոպական նախալեզուն ունեցել է պայթական բաղաձայնների հարուստ համակարգ (շրթնային, աւամային, քմական, կատկային քառաստիճան բաղաձայններ), բաղաձայնական համակարգում էական տեղ են ունեցել և ձայնորդները։ Վերջիններս, ըստ տարբեր դիրքերի, հանդես են եկել տարբեր որակներով՝ բաղաձայնական, ձայնավորական և կիսաձայնային։ Քիչ են եղել ձայնավորները (հիմնականում՝ երեք), որոնք հանդես են եկել երկար և կարճ տեսակներով։ Չայնավորների հետ ձայնորդները կազմել են երկբարբառներ (կիսաձայնային որակով), որոնք նույնպես եղել են երկար և կարճ տեսակներով և այլն։

Ճիշտ կերպով ընդգծելով, որ ժառանգ լեզուներում նույնությամբ չի պահպանվել հիմք լեզվի հնչյունական դրությունը՝ հեղինակը ներկայացնում է հին և նոր հայերենի հնչյունական համակարգերը։ Հին հայերենի համեմատությամբ ցույց է տալիս նոր հայերենում (աշխարհաբարում) առաջացած հնչյունական էական տարբերությունները (կիսաձայնների և հետևաբար երկբարբառների ու եռաբարբառների վերացում, առանձին հնչյունների որակական փոփոխություններ և այլն)։ Ապա ուրվագծում է արտասանական կանոնները ժամանակակից վիճակով։ Աչքաթող չեն արվում արևելահայ և արևմտահայ գրական լեզուների արտասանական յուրահատկությունները։ Լինելով խոշոր բարբառագետ՝ Հ. Ահառյանը իր իսկ հետադրությունների հիման վրա ցուցադրում է հայերենի բարբառների հնչյունական դրությունը։ Գիտության համար բացառիկ կարևորություն ունեն նրա ամփոփումները, որտեղից տեղեկանում ենք, որ ընդհանուր առմամբ հայերենի բարբառներում կան 17 ձայնավոր, 21 երկբարբառ, 3 եռաբարբառ և 49 բաղաձայն (էջ 245)։ Հնչյունների բնութագրումները ուսումնասիրողների համար ունեն ոչ միայն ճանաչողական, այլև գործնական նշանակություն, քանի որ օգնում են ճիշտ արտասանությանը, այլև հնարավորություն են տալիս հետազոտություններ կատարելիս ճիշտ ներկայացնել այս կամ այն հնչյունը։

Այս բոլորը վերաբերում են հնչյունների «անհատական» բնույթին: Սակայն մեծ լեզվաբանը այդքանով չի սահմանափակվել: Նրան հետաքրքրել են նաև հնչյունական խմբերը, արտասանական շղթայի ավելի մեծ հատվածները՝ իրենց առանձնահատկություններով, արտասանական այլևայլ իրողություններով: Այսպիսով նա քննել է վանկը իր զանազան տեսակներով, հորանջը և սրա հետ կապված արտասանական մի շարք երևույթներ: հնչյունների հավելում, միացում և այլն: Ուշագրավ են հնչերանգին վերաբերող հատվածները: Հնչերանգը նեղ առումով այստեղ ներկայացվում է որպես արտասանվածքի ելևէջ՝ զգայական, տրամաբանական և լեզվական տեսակներով (էջ 287): Ըստ այսմ քննում է նախադասությունների հնչերանգային տիպերը, ապա կանգ առնում տոնի (երաժշտական շեշտի) և ուժգնության շեշտի վերաջույց տալով, թե ինչպես արտասանական բնույթի փոփոխությամբ տոնը կարող է վերածվել ուժգնության շեշտի և այլն (էջ 305—306): Վերջինիս համար էլ նշում է տարբեր տեսակներ՝ գլխավոր, երկրորդական, կայուն և ազատ և այլն: Հնչերանգի բնութագրումն ավելի ամբողջական է դարձվում այնպիսի երևույթների քննությամբ, որպիսիք են արտասանվածքի ուժգնությունը (ինտենսիվությունը), տեականությունը, դիմը, դադարը և այլն, թեև նրանք տրվում են հնչերանգից (իբրևնականումով՝ ելևէջից) առանձին, անկախ գլուխներով: հատուկ հատվածով ներկայացվում է հայերենի շեշտը՝ պատմական քննությամբ:

Գրքի այս մասում հիմնական հարցերի հետ իբրև ուղեկցողներ շոշափվում են նաև ալբուրենին ու տառադարձությանը, ուղղագրությանը, կետադրությանը, համառոտագրությաններին վերաբերող հարցեր:

Հատորի կեսից ավելին (ամբողջ երկրորդ մասը) նվիրված է հնչյունական փոփոխություններին: «Ձայնափոփոխություն» հասկացությամբ նկատի են առնված բոլոր տեսակի հնչյունական փոփոխությունները: Դրանք բաժանված են երեք հիմնական տեսակների՝ ա) առաջատական, բ) անմիջական, գ) նմանողական: Առաջին տիպի փոփոխությունները պատմական բնույթ ունեն, տեղի են ունենում երկար դարերի ընթացքում և դրանով իսկ հակադրվում են անմիջական ու նմանողական փոփոխություններին: Հնչյունական փոփոխությունների հիման վրա ձևավորվում են հնչյունական օրենքները, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում է լեզվաբանությունը: «Լեզվաբանությունը ձայնական օրենքների գիտություն է» — գրում է Հ. Աճառյանը (էջ 392): Հնչյունական օրենքները որոշվում ու հաստատվում են փաստերի

գումարով: Եթե նշում ենք, որ հնդեվրոպական հիմք լեզվի Բ հնչյունը բառակերպում հայերենում տալիս է հ, ապա նկատի ենք ունենում գոյություն ունեցող շուրջ 30 փաստերը, որոնք հաստատում են այդ օրենքը: Եվ դրան հակասող ոչ մի փաստ չկա: Այսպես էլ պետք է իմանալ ուրիշ օրենքների մասին: Հնչյունական օրենքների մեջ ամենակարևորը բացարձակությունը և համաչափությունն են: Հնչյունական փոփոխությունները ավելի լավ բացատրելու համար, նշում է հեղինակը, անհրաժեշտ է քննել և ցույց տալ փոփոխությունների ընթացքը՝ սկզբից մինչև վերջ (էջ 400): Այստեղ նկատի են առնվում նաև հնչյունափոխական ուսումները, բացառությունները, վերադարձը, ժամանակագրությունը և այլն: Այնուհետև ներկայացվում են ձայնավորների, կիսաձայնների ու բաղաձայնների առաջատական (պատմական) փոփոխությունները: Ցույց է տրվում, որ ձայնավորների փոփոխությունը կապված է շեշտի, տեղություն, դիրքի ու մոտակա հնչյունների հետ: Լմանօրինակ պայմաններում, քայց ըստ բաղաձայնների յուրահատկության են լինում վերջիններիս փոփոխությունները (էջ 446): Այս ամենով հանդերձ՝ բոլոր տեսակի հնչյունների փոփոխությունների գործում Հ. Աճառյանն էական դել է վերագրում արտասանական գործարանների աշխատանքի կրած փոփոխություններին, որոնք կատարվում են դարերի ընթացքում և այդպիսով հանգեցնում հնչյունական փոփոխությունների:

Ինչպես մյուս բաժիններում, այստեղ ևս նախ ուսումնասիրված են երևույթների ընդհանուր սկզբունքներն աշխարհի լեզուների հասար, որով հող է նախապատրաստվել հնդեվրոպական լեզուների և մասնավորապես հայերենի պատմական հնչյունափոխության հետազոտման: Պատմական (ըստ հեղինակի՝ առաջատրվական) փոփոխությունն այստեղ շատ լայն առում ունի՝ հիմք լեզվից մինչև նոր ժամանակները:

Գիտական չափազանց մեծ արժեք ունի «Հնդեվրոպական լեզուների ձայնափոխությունը» գլուխը (էջ 463—590): Հեղինակի նպատակն է եղել այստեղ քննության առնել հնդեվրոպական հիմք լեզվի հնչյունների փոփոխությունները ժառանգ լեզուներում և հատկապես հայերենում: Եվ, իրոք, ազգակից լեզուների փաստերի խորքի վրա ամբողջականությամբ տրվում է հայերենի պատկերը: «Բերված օրինակները քույր լեզուների մեջ շատ չափավոր թվով են, ինչպես հասկանալի է, իսկ հայերենի համար՝ ամբողջական. —բոլոր օրինակները հիշված են առանց բացառության», — կարդում ենք գրքում (էջ 463): Հեղինակը անհրաժեշտ է համարել նշել, որ այս

գլխում բերվող փաստերը համեմատված են «Հայերեն արմատական բառարանի» և «Հայոց լեզվի պատմության» 1-ին հատորի տվյալների հետ: Այստեղ մեկ առ մեկ ներկայացված են ձայնավորների, երկրորդականների, բաղաձայնների ու ձայնորդների փոփոխությունները՝ հիմք լեզվից մինչև գրաբարյան շրջանը: Դրանք բերված են ըստ գիտության մեջ հայտնի դարձած հնչյունական համապատասխանությունների օրենքների: Ուսուցողական նպատակներով ցույց են տրված համապատասխանությունները նաև հակառակ դիրքից, այսինքն թե հայերենի այս կամ այն հնչյունը ի՞նչ համապատասխանություն ունի նախալեզվի հնչյունների մեջ: Պատկերն ալվելի լրիվ են դարձնում նաև այլ տեղեկություններ՝ հնչյունների հավելումը (աճականներ, մասնիկների ալվելացում), անկումը, տեղափոխությունը, ինչպես նաև բաղաձայնների դասավորությունը բառի մեջ և այլն: Սա պատմա-համեմատական լեզվաբանության կողմից հատկապես հայերենի պատմա-համեմատական հնչյունաբանության բնագավառում ձեռք բերած նվաճումների գեղեցիկ ամփոփումն է, որն առանձին ձեռնարկի նշանակություն ունի այդ հարցերով զբաղվողների համար:

Հայերենի ներսում տեղի ունեցած պատմական հնչյունափոխության (գրաբարից մինչև աշխարհաբարն ու բարբառները) պատկերն է տալիս հաջորդ գլուխը (էջ 591—678): Այն առատ նյութ է սլարոնակում մեր լեզվի հնչյունների հետագա դարերի ներքին տեղաշարժերի ու սրանց հետ կապված բաղաձայնային երևույթների միտաբերյալ:

Մի ընդարձակ գլուխ է տրամադրված անմիջական և նմանողական հնչյունափոխություններին (էջ 679—735), որտեղ քննարկված են այնպիսի երևույթներ, ինչպիսիք են նմանաբանու-

թյունը (անալոգիա, նմանակություն), հոմանմանությունը (ասիմիլացիա, աոնմանում), տարնմանությունը (դիսիմիլացիա), խառնակումը, տեղափոխությունը (մետաթեզա, դրափոխություն), սղումը և կրճատումը, հարակցումը կամ հավելումը, հարասությունը, նախասությունը, թյուրըմբռնումը, գրության նմանությունից առաջացած ձևերը, ժողովրդական ստուգաբանությունը և այլն:

Գիտական ստուգաբանությունը թեև լեզվաբանության այլ բնագավառի է վերաբերում, սակայն հեղինակը նկատի ունենալով, որ այստեղ էական նշանակություն ունեն հնչյունական օրենքները, մի առանձին գլուխ էլ անդրադարձել է նրա սկզբունքներին: Ընդունված օրինակներով ընթերցողին ծանուցել է այդ հետաքրքրական ճյուղի մասին:

Գիրքն ունի նաև հավելված, որտեղ ընդգրկված փաստական նյութը (բառերի գրադարձական, արտասանական տարբերակներ և այլն՝ համապատասխան բացատրություններով) շատ կարելի է մեր լեզվի պատմության ուսումնասիրման համար:

Դժվար է մի ոչ մեծ հոդվածում թեկուզ և համառոտակի ընդգրկել բոլոր այն հարցերը, որոնք գիտականորեն շոշափված են այստեղ: Մեր առաջ է մի գիրք, որը հնչյունաբանության յուրատեսակ հանրագիտարան է և իր ճոխ բովանդակությամբ մեծ արժեք ունի ինչպես հայերենի, նույնպես և աշխարհի շատ լեզուների հնչյունների և հնչյունական երևույթների ուսումնասիրության տեսակետից: Այն ընթերցողի մեջ առաջ է բերում խորին հարգանքի ու երախտագիտության բարձր զգացումներ հեղինակի վաստակի նկատմամբ:

Ա. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

„ДЕКОРАТИВНОЕ ИСКУССТВО СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ“. Альбом. Составители: Н. Степанян и А. Чакмакчян. Вступительная статья Н. Степанян. А., изд. „Аврора“, 1971, 61 стр., 60 илл. в тексте 166 таблиц, цена 7 р. 30 коп.

Рецензируемый альбом охватывает памятники с I по XVIII вв., воспроизведенные на 26 цветных и 140 черно-белых таблицах с аннотациями в перечне репродукций. Им предпослана вступительная статья на 50 стр. Появление этого альбома специалисты и широкие круги читателей встретили с большим интересом; и это вполне понятно, ибо наши представления об армянском декоративно-прикладном искусстве еще очень отрывочны. Литература по этому вопросу скудна, обобщающих работ

и вовсе нет. И это не все. Впервые альбом дает возможность увидеть первоклассные образцы армянского рельефа в высокохудожественных воспроизведениях, собранные всецело в большом количестве. Разбросанные до сих пор по многочисленным, порою мало доступным трудам, они были представлены там иллюстрациями, выполненными на недостаточно высоком уровне, что, несомненно, снижало их эстетическое воздействие. Этот пробел полностью устраняют художественные фотографии альбо-